




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«27» նոյեմբեր 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-43/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի 12.11.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքին 18.11.2015թ. ներկայացրած դիրքորոշումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.11.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 06.10.2015թ. հայտ է ներկայացրել:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը, ներկայացրել է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ինքնարժեքի գինը կազմել է 167.867.158 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի հավելված N 3.4-ով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով, նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ, 07.10.2015թ. խնդրել է Կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 109.031.746 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետով որոշվել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված կարգով վճարման պահանջագիր ներկայացնել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին:

Ընկերությունը ներկայացրած բողոքով վկայակոչել է Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը, որի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ

հողվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 109.031.746 ՀՀ դրամ:

Այսինքն, վերը նշված դրույթի և եզրակացության համաձայն, «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման, ինչն էլ կատարվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 2-րդ կետով:

Մինչույն ժամանակ վերը նշված արձանագրության 4-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ից գանձել հայտի ապահովում և Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված կարգով վճարման պահանջագիր ներկայացնել Ընկերությանը սպասարկող բանկին:

Ընկերությունը հայտնել է, որ նշված որոշումն ակնհայտորեն հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը՝ մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընկերությունը գտնում է, որ նման պարագայում միանշանակ բացակայում է վերը նշված հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, քանի որ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից չի ճանաչվել և հայտերի բացումից հետո չի հրաժարվել Ընթացակարգին հետագա մասնակցությունից:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն ենթադրաբար նախատեսում է հայտի ապահովումը գանձել Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, չնայած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 7-1 արձանագրության մեջ չի նշվում գանձման իրավական հիմքերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսինքն, անհրաժեշտ է հետևյալ երկու հանգամանքների միաժամանակյա առկայությունը.

- 1) գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում.
- 2) գործընթացին տվյալ մասնակցի մասնակցության դադարեցում:

Երկրորդ հանգամանքի առկայությունն անվիճելի և ընդունելի է Ընկերության կողմից:

Ընկերությունը նշել է նաև, որ ինչ վերաբերում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտմանը, ապա Օրենքի 2-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու վերաբերյալ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, իսկ Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնումների պլանավորման, նախապատրաստման, պայմանագրի կնքման և դրա կատարման գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է:

Այսինքն, հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հանգամանքը, ինչպես նաև դրա շրջանակներում տրված ցանկացած

հայտարարությունը որևէ կերպ չի կարող հանդիսանալ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որի չկատարումը կհանգեցնի այդ պարտավորության խախտմանը:

Կարգի 67-րդ կետով սահմանվում է «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման ընթացակարգը, ինչը հանդիսանում է գնումներին մասնացելու իրավունք և որակավորման չափանիշների գնահատման պայման:

Ընկերությունը նշել է, որ պատահական չէ, որ Կարգի 67-րդ կետն ընդգրկված է Կարգի «Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները գնահատելու պայմանները» վերնագրով 8-րդ գլխում:

Այսինքն, հենց Կարգի դրույթներն են վկայում այն մասին, որ որակավորման չափանիշները հանդիսանում են ոչ թե ստանձնած պարտավորություն, այլ գնումներին մասնակցելու իրավունք, իսկ գործընթացին մասնակցելու իրավունք չունենալը չի հանդիսանում պարտավորության խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ից չափեր է գանձել Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածով սահմանված տուժանքի մասին համաձայնությամբ (այսուհետ նաև՝ տուժանքի մասին համաձայնություն) և կից ներկայացված վճարման պահանջագրով նախատեսված 4.200.000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ տուժանքի գումարը և, հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետը, խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետը:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) իրավունք ունի որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, Ընկերությունը խնդրել է Խորհրդին կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետի կատարումը, այն է՝ «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին ընկերության կողմից հայտի ապահովում վճարելու պահանջ ներկայացնելը:

«Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 18.11.2015թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիքորոշումը

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 24.11.2015թ. թիվ 01/08.1/21953-15 գրությամբ ներկայացրել է «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7-1 արձանագրության 1-ին կետով որոշել է «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտի N 3.4 հավելվածը որակել իրականությանը չհամապատասխանող: Նույն արձանագրության 2-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ արձանագրության 4-րդ կետով որոշվել է Ընթացակարգի N 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված կարգով «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին ներկայացնել տուժանքի մասին համաձայնությամբ նախատեսված վճարման պահանջագիրը:

Պատվիրատուն գտնում է, որ տուժանքի մասին համաձայնությամբ նախատեսված տուժանքը ենթակա է վճարման «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից, ուստի Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-43/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-43/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների նպատակով հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.10.2015թ. հայտ է ներկայացրել:

3. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

4. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է **205.469.401 ՀՀ դրամ**:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշել է «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

6. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ՝ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է **109.031.746** ՀՀ դրամ:

8. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն 06.10.2015թ. ներկայացրել է հայտի ապահովում՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով («ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի N 9 հավելված):

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7-1 արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի և 71-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետով որոշել է տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված կարգով «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին ներկայացնել տուժանքի մասին համաձայնությամբ նախատեսված վճարման պահանջագիրը:

11. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն 12.11.2015թ. ներկայացրած բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդին միջնորդել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և

կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետի կատարումը, այն է՝ «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին ընկերության կողմից հայտի ապահովում վճարելու պահանջ ներկայացնելը:

12. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովի, 18.11.2015թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Գեվ-ԷԼԼ-Պլաստ» ՍՊԸ-ի 12.11.2015թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի 18.11.2015թ. ներկայացրած դիրքորոշումը, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 24.11.2015թ. թիվ 01/08.1/21953-15 գրությունը և կից փաստաթղթերը, «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովի 18.11.2015թ. կայացրած որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու վերաբերյալ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և **պարտականությունների իրագործմանն** ուղղված գործողությունների ամբողջություն է:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի

ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե **նա խախտել է գնման գործընթացի շրջանակում սրանձնած պարտավորություն**, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատաս-

խանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվեքու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից 06.10.2015թ. միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության 1-ին կետի 1.3-րդ ենթակետը սահմանում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելուց բխող ***պարտավորությունները չկատարելու*** կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

«Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.4 հավելվածի ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» ենթակետով ***հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվեքու տարիների իր համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը, ներկայացրել է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որը կազմել է **205.469.401 ՀՀ դրամ:**

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ՝ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք

հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է **109.031.746**

ՀՀ դրամ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2015թ. տրամադրված եզրակացության մեջ նշված Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի և Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի համեմատությունից պարզ է դառնում, որ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից հայտի N 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկից: Այսինքն, «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից հայտի N 3.4 հավելվածով ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» ենթակետը չի համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում է կեղծ տվյալ:

Ընկերությունը չի պահպանել Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները: Մասնավորապես, Ընկերությունը չի բավարարել հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» չափանիշին, ինչը, ըստ Օրենքի, անհրաժեշտ է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար: Ավելին, պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող ֆինանսական միջոցներ ունենալը, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, ամրագրվում է որպես մասնակցի պարտավորություն, իսկ Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշին բավարարելու համար անհրաժեշտ է, որ մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չլինի ներկայացված գնային առաջարկից:

Բացի այդ, «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն, ներկայացնելով կեղծ տվյալ, խախտել է նաև գնման գործընթացի շրջանակում ստանձնած՝ իրականությանը համապատասխանող տվյալ ներկայացնելու իր պարտավորությունը, քանի որ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է **205.469.401** ՀՀ դրամ, այն դեպքում, երբ Ընկերության՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու

տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է **109.031.746 ՀՀ դրամ**: Մինչդեռ Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը սահմանում է, որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի գնային առաջարկից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. թիվ 7-1 արձանագրության 1-ին կետով որոշել է «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը որակել իրականությանը չհամապատասխանող: Նույն արձանագրության 2-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը մերժել:

Արդյունքում «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը, ինչը Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հիմք է հանդիսանում մասնակցի կողմից հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Պատվիրատուն գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան, ուստի Ընկերության՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետի կատարումը, այն է՝ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին Ընկերության կողմից հայտի ապահովում վճարելու պահանջ ներկայացնելը դադարեցնելու վերաբերյալ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, և առաջարկում ենք «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի 12.11.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Այունց



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-43/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան